

Novoye vremya, 11 December 2003

(հայերեն թարգմանությունը լույս է տեսել «Վասն Հայության» պարբերականում, 2003 թ-ի դեկտեմբերի վերջին)

ԱՆՆԱԽԱԴԵՊ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՏԱՊԱԼՈՒՄԸ

Արմեն Այվազյանի դոկտորական ատենախոսության պաշտպանությունը «Հայոց եկեղեցին հայ ազատագրական շարժման ԺԲ դարի քառուղիներում», որը տեղի է ունեցել 2003 թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ակտային դահլիճում, դարձել է հայաստանյան հայագիտության իսկական փորձաքարը: Առաջին իսկ պահից ներկաները զգացել են, որ ներկա չեն ձանձրալի, միօրինակ սովորույթի ձևն առած ակադեմիական արարողության: Ատենախոսության քննարկման համար գումարված նիստի վերջում (այն տևեց հինգ ժամ) ԲՈՀ-ի նախագահի տեղակալը, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանն ուրախությամբ նշել է, որ իրեն առաջին անգամ է բախտ վիճակվել ներկա լինել իսկական և լիարժեք պաշտպանության: Իրոք, այս առումով պաշտպանությունն աննախադեպ էր:

Մասնագիտացված խորհրդի անդամների կարծիքներն ու գնահատականներն արմատապես տարբերվում էին: Մի մասը արտահայտվում էր ատենախոսության օգտին՝ բարձր գնահատելով հեղինակի կատարած աշխատանքը: Ակադեմիկոսներ Մանվել Զուլալյանը, Սեն Արևշատյանը, Հրաչյա Սինոնյանը, Վարդգես Միքայելյանը, պրոֆեսորներ Վալտեր Դիլոյանը, Մհեր Կարապետյանը, Վլադիմիր Ղազախեցյանը ոգևորությամբ մատնանշում էին հեղինակի կատարած աշխատանքի արժեքն ու կարևորությունը և կոչ անում քվեարկել Արմեն Այվազյանին պատմական գիտությունների դոկտորի աստիճանի շնորհման օգտին: «Այվազյանը մեր պատմագրության ապագան է» ուղղակի հայտարարում էին նրանցից շատերը: Սակայն այսօրինակ գնահատականները ոչ միայն արձագանք չէին գտնում մասնագիտացված խորհրդի անդամների մյուս մասի մոտ, այլ, ընդհակառակը, էլ ավելի սնուցում էին ատենախոսության նկատմամբ վերջիններիս արդեն նախապես առկա

մերժողական վերաբերմունքը: Մանրամասն քննադատության է ենթարկվել ողջ
ատենախոսությունը՝ ապահովված չէ անհրաժեշտ տեքստային ծավալը,
վերնագիրը ժամանակագրորեն չի համապատասխանում բովանդակությանը,
բացակա է դոկտորականի համար պահանջվող կառուցվածքը, մխիթարյան
աղբյուրների համաձայն «սկանդալային հռչակ ունեցող» Ամենայն Հայոց
կաթողիկոս Ղազար Ջահկեցին (1737-1751 թթ.) ներկայացված է որպես հայ
ազատագրական պայքարի մեծ տեսաբան և ընդհատակյա կազմակերպիչ և
այլն: Արմեն Այվազյանը պաշտպանվում էր սկզբունքորեն և խիստ: Դրվագ առ
դրվագ, կետ առ կետ նա հիմնավորում էր սեփական մոտեցումները,
ներկայացնում՝ հակափաստարկներ: Պաշտպանության եղանակն այնքան
հմուտ էր և այնքան տրամաբանական, որ կամա թե ականա հարուցում էր
ներկաների հիացմունքը: «Սովորեք, թե ինչպես է պետք պաշտպանել» լսվում
էր դահլիճում: Մասնագիտացված խորհրդի տասնութ անդամներից յոթը
քվեարկեցին ատենախոսության հաստատման օգտին, ութը՝ դեմ, երեք
քվեաթերթիկները ճանաչվել են անվավեր: Քվեարկության արդյունքները
հարուցել են դահլիճի կտրուկ դժգոհությունը: Օրինակելի պաշտպանությունն
անսպասելիորեն ունեցել է առավել քան տիպիկ ավարտ, որին
անտարակուսելիորեն կիստևի կարծիքների անցանկալի բեռնացումն ու
ընդհանուր ապակայունացումը մինչ օրս հանդարտ ապրած հայաստանյան
պատմաբանների ընտանիքում: Բայց ի՞նչ է իրականում կատարվել: «Դեմ»
քվեարկողները պնդում են, որ բացասական եզրակացություն տալով և
չհաստատելով Արմեն Այվազյանի դոկտորական ատենախոսությունը, նրանք
ղեկավարվել են բացառապես ակադեմիական նկատառումներով: Այդպե՞ս է
արդյոք: Դահլիճում հնչել է նաև տրամագծորեն հակառակ կարծիքը:
Ակադեմիկոսներ Հրաչյա Սիմոնյանը, Ռաֆայել Ղազարյանը կոչ են արել
մասնագիտացված խորհրդի անդամներին քվեարկել համաձայն խղճի և ոչ թե
ատենախոսի հանդեպ ունեցած անձնական վերաբերմունքի ու որոշ
«քաղաքական պատվերի»: Մասնագիտացված խորհրդի մի մասի
անձնավորված բացասական վերաբերմունքի և «քաղաքական պատվերի»
առկայության մասին հնչած յուրաքանչյուր խոսքը վերջիններիս մոտ
հարուցում էին խիստ նյարդային արձագանք: Այդ հանգամանքը ներկաների

մեծամասնությունն իրավացիորեն որակել է որպես քաղաքական պատվերի առկայության ակամա խոստովանություն:

Երեսունիննամյա Արմեն Այվազյանը Մատենադարանի ավագ գիտաշխատող է և յոթ մենագրությունների հեղինակ: Դասախոսում է քաղաքագիտություն և ռազմական պատմություն Երևանի պետական և Հայաստանի Ամերիկյան համալսարաններում: Փայլուն ինտելեկտը, ուժեղ կամային գծերով օժտված բնավորությունը վաստակել են շատերի հարգանքն ու ոչ սակավ այլոց՝ նախանձը: Արմեն Այվազյանը մեծ ճանաչում է ստացել «Հայոց պատմության հարցերի լուսաբանումը ամերիկյան հայագիտության մեջ. Քննական տեսություն», Երևան, 1998 մենագրության շնորհիվ: Այս գրքում, որն արժանացել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի պաշտոնական հավանությանը, հեղինակը խստագույնս քննադատել, իսկ տեղ-տեղ ջախջախիչ հարված է հասցրել արևմտյան «վաստակաշատ» հայագետների «գիտական պրպտումներին»: Իրեն հատուկ սկզբունքայնությամբ և անառարկելի փաստարկմամբ Արմեն Այվազյանը լույս է սփռել հայագիտության ամերիկյան դպրոցին լիովին հատուկ բազմաթիվ արմատական թյուրիմացությունների ու աղաղակող անհրազեկության վրա: Սակայն հեղինակը դրանով չի բավարարվել և համոզիչ կերպով ցույց է տվել, որ հայ ժողովրդի պատմության միտումնավորապես կեղծ և կանխակալ հայեցակարգերն ունեն քաղաքական պատվերի բնույթ և ակնհայտորեն սպասարկում են որոշ պետությունների արտաքին քաղաքական շահեր: Նման հայեցակարգերի բովանդակությունը միանգամայն պարզ է: Հայերը եկվոր ազգ են հայկական լեռնաշխարհում, որի տարածքում երբևէ մեծամասնություն չեն կազմել, հայերը չունեին երեքհազարամյա կայուն պետականության ավանդույթները, հայկական մշակույթն իրանական մշակութային առեալի եզերային կցորդ է, որը երբևէ խորությամբ ու յուրօրինակ ինքնությամբ աչքի չի ընկել, հայ միջնադարյան պատմիչների գործերը չունեն փաստագրական արժեք, հայոց պատմահայր Մովսես Խորենացին տառացիորեն անվանված է «կեղծարար լկտի խաբեբա»... (Խորապես մտահոգիչ է, որ հայոց պետականության երեքհազարամյա ավանդույթի հիշատակությունը հարուցեց մասնագիտացված խորհրդի որոշ անդամների գրավոր եղանակով

արտահայտված զայրույթը:) Հարկ է ընթերցել գիրքը, որպեսզի հնարավոր լինի պատկերացում կազմել հեղինակի կատարած աշխատանքի ողջ խորության և լրջության մասին՝ հատկապես ՀՀ ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքների բացահայտման առումով: Ինչ խոսք, ամերիկյան հայագիտության «տիտանների» հակագիտական պատվերակատար գործունեության մերկացումն ու կործանարար մահացու քննադատությունը խուճապ է հարուցել համապատասխան շրջանակներում: Սկսվել են աննախադեպ ճնշումներ Հայաստանի գիտական շրջանակների վրա: Պահանջվում էր ամեն գնով վարկաբեկել, լռեցնել, չեզոքացնել արտասահմանում «ինտելեկտուալ ահաբեկչի» տիտղոս վաստակած Արմեն Այվազյանին: Ուստի, հաստատել Արմեն Այվազյանի դոկտորական ատենախոսությունը, նշանակում էր արհամարիել այն մարդկանց կարծիքը, որոնցից մեծապես կախված է դրամաշնորհների և արտասահմանում անցկացվող գիտական կոնֆերանսների հրավերների բաշխումը: Քվեարկությանը նախորդած ելույթներում ակադեմիկոսներ Հրաչյա Սիմոնյանն ու Ռաֆայել Ղազարյանը կոչ են ուղղել մասնագիտացված խորհրդի անդամներին քվեարկելիս ղեկավարվել գիտնականի ու քաղաքացու խղճով և ոչ թե պատեհապաշտական նկատառումներով: Այդ կոչն ուղղված էր այն մարդկանց, որոնք մինչ այդ արդեն առիթ են ունեցել ցուցադրելու ստրկամիտ ստորաքարշության հրաշալիքները՝ չթույլատրելով Արմեն Այվազյանին մասնակցել սույն տարվա սեպտեմբերին Երևանում գումարված հայագիտական առաջին համաժողովին: Արմեն Այվազյանի սեփական դրույթների փայլուն ու հանդիչ պաշտպանությունը տեղ չէր թողնում բացասական քվեարկության համար, սակայն ատենախոսությունն այդպես էլ չի հաստատվել...

ԱՐՄԵՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ